ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԳՄՍՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի
ԿԱՐԻԵՐԱՅԻ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
2023 ԹՎԱԿԱՆԻ II ԿԻՍԱՄՅԱԿ

2023 թվականին իրականացվել են կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատուի աշխատանքային պլանով նախատեսված բոլոր աշխատանքները՝ կարիերայի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում ուսանողներին և շրջանավարտներին, խորհրդատվության իրականացում, ուղղորդման աշխատանքների կատարում, աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցակցության բարձրացման նպաստում, մասնագիտությամբ զբաղվածության հնարավորությունների բացահայտման աջակցում:
2023թ. (Հունվար-մայիս) համագործակցել ենք 43 գործատու կազմակերպությունների հետ:
2023թ. (Հունվար-մայիս) անցկացվել են անհատական խորհրդատվություններ թվով 62 ուսանողների հետ:
Ուսանողների հետ կազմակերպվել են 39 բազմաբնույթ սեմինար դասընթացներ, որոնց ընթացքում ուսանողները ծանոթացել են աշխատաշուկայի պահանջարկին, գործատուներին ներկայանալու հմտություններին, ՈՒԹՀՌ վերլուծությանը և այլ թեմաների:
Կազմակերպվել են այցելություններ թանգարաններ, որոնց արդյունքում ուսանողները, որպես արհեստագործներ, ծանոթացել են Գյումրու մշակույթին, նրանց մոտ ձևավորվել է գեղագիտական ճաշակ, գեղեցիկը գնահատելու կարողություն և ազգային կոլորիտը պահպանելու անհրաժեշտության գիտակցում:
Ուսանողների հետ այցելել ենք տարբեր մասնագիտական վայրեր, զրուցել գործատուների հետ:
Կատարվել են հետազոտություններ շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ, որի վերլուծության արդյունքում պարզաբանվել է ուսումնարանի շրջանավարտների զբաղվածությունը ըստ ուսումնական տարիների:Ստորև ներկայացված են կարիերայի կենտրոնի 2023 թվականին կատարած աշխատանքները.

- **2023 թվականի հունվարի 20-ին** «Խոհարարական գործ՝ խոհարար» երկրորդ կուրսի ուսանողների համար անցկացվեց «Անձի ինքնագնահատում և SWOT (ՈՒԹՀՌ) վերլուծություն» խորագրով սեմինար-դասընթաց, որի նպատակն էր ձևավորել անձի ինքնահաստատման էության, նշանակության, գործոնների, ձևերի, բաղադրիչների վերաբերյալ գիտական գիտելիքների հաղորդումն ու ինքնագնահատման գործնական կարողություններ:
  Դասընթացի թեմաներն էին.
  - Ինքնագնահատում
  - Ինքնագնահատման վրա ազդող գործոնները
  - Ինքնագնահատման ձևերը
  - Ինքնագնահատման հարցաշար
  - ՈՒԹՀՌ (SWOT) վերլուծություն

- **2023 թվականի հունվարի 26-ին** «Խոհարարական գործ՝ խոհարար» առաջին կուրսի ուսանողների համար անցկացվեց « Կարիերայի պլանավորում, կարիերայի հնարավորությունների ուսումնասիրում» թեմայով դասընթաց:

Ուսանողը կիմանա՝

- Կարիերայի էությունը, կարիերայի կառավարման անհրաժեշտությունը
- հմտությունների զարգացման ուղիները

Կկարողանա՝

- պլանավորել իր կարիերայի ուղին
- կարիերայի պլանավորման գործընթացում հաշվի առնել վերջինիս վրա ազդող հիմնական գործոնները:

  Կտիրապետի կարիերայի պլանավորման հմտություններին:
  Գնահատումը կիրականացվի քննարկումների կամ գնահատման թերթիկների միջոցով:
- **2023 թվականի փետրվարի 9-ին** « Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» առաջին կուրսի ուսանողների համար անցկացվեց «Շարունակական/հարատև կրթություն և կարիերայի զարգացման հմտություններ» թեմայով դասընթաց:

Ուսանողը կիմանա՝

- ✓ շարունակական կրթության մեթոդաբանությունը
- ✓ շարունակական կրթության սկզբունքները, բաղադրիչները

Կկարողանա պլանավորել իր կարիերայի ուղին շարունակական կրթության հիման վրա:
Կտիրապետի սեփական կարիերայում հաջողություններն ու անհաջողությունները իրատեսորեն ու ադեկվատ գնահատելու:

- **2023 թվականի փետրվարի 14-ին** ուսանողական խորհուրդից 14 մասնակից մասնակցեց Ժողովրդական Ճարտարապետության և Քաղաքային Կենցաղի Թանգարանի բակում կազմակերպած Տյառնընդառաջի միջոցառմանը: Հայ Առաքելական եկեղեցու տերունական սուրբ տոնի խորհուրդը ներկայացվեց Շիրակի թեմի առաջնորդարանի քահանայի կողմից, որից հետո կատարվեց Անդաստանի խորհդավոր կարգը: Իբրև Քրիստոսի լույսի խորհրդանիշ՝ վառվեց ծիսական խարույկը: Համախմբված շուրջպարերը, ազգային երգերն ու ավանդական հյուրասիրությունը՝ խարույկի շուրջ, տոնական օրը դարձրեցին անմոռանալի:
- **2023 թվականի փետրվարի 25-ին** «Բոլորը հանուն հավասար իրավունքների» հիմնադրամի կողմից ստանալով վերապատրաստումների և բանավեճի մրցաշարերին մասնակցելու հրավեր, ներկայացավ «Կոռուպցիա. Shift+Delete» ծրագրի շրջանակներում իրականացվող կարողությունների զարգացման երկօրյա վերապատրաստման դասընթացին: Մեկնարկեց ծրագրի առաջին փուլը, որը հնարավորություն ընձեռեց ուսանողների՝ կոռուպցիայի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը, ինչպես նաև կոռուպցիայի ճանաչմանը,

բացահայտմանը և հակակոռուպցիոն մեխանիզմների կիրառմանը, նպաստեց փաստերի ստուգման, մարդու իրավունքների իմացության, քննադատական մտածողության, համայնքային կառավարմանը մասնակցություն ունենալու գիտելիքների աճին և կարողությունների զարգացմանը: Սովորողների թիմը գլխավորում էին ուսումնարանի բնագիտամաթեմատիկական հանձնախմբի նախագահ, մենթոր-դասախոս Ռ.Պետրոսյանը և կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատու Կ.Ղարագյոզյանը:

- **2023 թվականի փետրվարի 27-ին** կազմակերպվել է «Գործատուին ներկայանալու հմտություններ» խորագրով սեմինար-դասընթացներ, որը վարեց կենտրոնի ղեկավար Կիմա Ղարագյոզյանը: Դասընթացին մասնակցում էր «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում» առաջին կուրսի ուսանողները, ընդհանուր նպատակն է՝ գործատուին ներկայանալու հմտությունների՝ արդյունավետ աշխատանքային հարցազրույցին մասնակցելու, մրցունակ ինքնակենսագրական, մոտիվացիոն նամակ գրելու կարողությունների ձևավորում:
- **2023 թվականի փետրվարի 27-ին** կազմակերպվել է «Կարիերայի կառավարում » խորագրով սեմինար-դասընթաց: Դասընթացին մասնակցում էր «Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» երրորդ կուրսի ուսանողները:

Ուսանողը կիմանա՝

- ✓ «Կարիերայի» հասկացության էությունը,
- ✓ Մասնագիտության ընտրության և կարիերայի դերը մարդու կյանքում
- ✓ Կարիերայի կառավարման/զարգացման գործոնները,

Կկարողանա հիմնավորել ինքնագնահատման, մասնագիտական կողմնորոշման կարևորությունը կարիերայի կառավարման/զարգացման գործում:
Կտիրապետի կարիերայի կառավարման գործընթացում հիմնական գործոնների բնութագրման կարողություններին:

- **2023 թվականի մարտի 3-ին** «Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողների մոտ կարիերիայի կենտրոնը կազմակերպել էր դասընթաց՝ «Ուսանողների իրավունքները և պարտականությունները» թեմայով: Նպատակը՝ իրավունքների և պարտականությունների իմացություն և կիրառում:
- **2023 թվականի մարտի 7-ին** անցկացվեց սեմինար «Խորհուրդներ առաջին անգամ աշխատանքի ընդունվողին» թեմայով, որին մասնակցեցին մասնագիտության՝ «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար» երրորդ կուրսի ուսանողները:

- ✓ Բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած պարտավորությունները
- ✓ Կատարել աշխատանքի սահմանված նորմերը
- ✓ Ստանալ աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքը
- ✓ Ժամանակին ու լրիվ ծավալով ստանալ աշխատանքային պայմանագրով սահմանված աշխատավարձը:

- **2023 թվականի մարտի 15-ին**, կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատու Կ. Ղարագյոզյանի նախաձեռնությամբ, «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողներն այցելեցին «Լենտեքս» ՍՊԸ: Այցելության շրջանակներում ուսանողներին ներկայացվեցին մարքեթինգային ճկուն քաղաքականության շնորհիվ ձեռնարկության հզորացման հետագիծը և հաջողության հասնելու գաղտնիքները: Սովորողներին հնարավորություն ընձեռնվեց նաև ակտիվ մասնակիցը դառնալ տարբեր արտադրամասերում գործող սարքավորումների շահագործման գործընթացին՝ արդեն ծանոթ լինելով աշխատատեղի ճիշտ կազմակերպմանը:
  - ✓ «Ի՞նչ է աշխատաշուկան»
  - ✓ «Արտադրող-սպառող գրագետ համագործակցություն»
  - ✓ «Թիմում կազմակերպված և արդյունավետ աշխատելու ունակություններ» թեմաները դարձան խթան հետագայում աշխատանք գտնելու հնարավորությունների բացահայտմանը:
- **2023 թվականի մարտի 16-ին** կազմակերպվել է «Գործատուին ներկայանալու հմտություններ» խորագրով սեմինար-դասընթացներ, որը վարեց կենտրոնի ղեկավար Կիմա Ղարագյոզյանը: Դասընթացին մասնակցում էր «Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» և « Գեղանկարչություն և քանդակագործություն փորագրող՝ փայտյա գեղարվեստական իրերի» երրորդ կուրսի ուսանողները:

  Ընդհանուր նպատակն է՝ գործատուին ներկայանալու հմտությունների՝ արդյունավետ աշխատանքային հարցազրույցին մասնակցելու, մրցունակ ինքնակենսագրական, մոտիվացիոն նամակ գրելու կարողությունների ձևավորում:
- **2023 թվականի մարտի 22-ին**, կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատու Կ.Ղարագյոզյանի նախաձեռնությամբ «Ոսկերչություն» մասնագիտության առաջին կուրսեցիներն այցելեցին խաղահրապարակների և մարզահրապարակների սարքավորումների արտադրությամբ զբաղվող Գյումրու «Մագնոն» ընկերություն:

  Այցելության շրջանակներում ընկերության ձեռներեց ղեկավարի կողմից մանրակրկիտ ներկայացվեց մետաղական կոնստրուկցիաների արտադրության արգասաբեր գործունեությունը ոչ միայն ՀՀ-ում, այլև՝ Անդրկովկասում: Սովորողները ակնդիրը դարձան մեծ հեղինակություն վայելող ընկերության կողմից արտադրված կիրառական սարքավորումների, որոնց բազմազանությունը և բարձր որակը երաշխիքն էին մեծ հաջողության:
- **2023 թվականի մարտի 22-ին** «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողները ստեղծեցին պաստառ «Բնության հետ ներդաշնակ» կարգախոսը իրազեկման գործում խթան կհանդիսանա որպես շարժման հոգացավ մասնակից՝ ուսանողները այսուհետ կապրեն և կստեղծագործեն այն գիտակցումով, որ փոքր «էկոլոգիական ոտնահետքը» կփրկի Երկիր մոլորակը:

- **2023 թվականի մարտի 23-ին** տեղի ունեցավ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) կողմից՝ Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության (BMZ) պատվիրակմամբ՝«Action Against Hunger» կազմակերպության կողմից իրականացվող «Տեղահանված և տեղաբնակ խոցելի խմբերի տնտեսական և սոցիալական ներգրավվածությունը Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում կազմակերպված զբաղվածության ոլորտում կիրառվող նորարարական և ներառական «SHUTTLE» մեթոդաբանության չորսամսյա դասընթացների մասնակիցների վկայագրերի հանձնման արարողությունը: Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի տնօրեն Ք. Ահարոնյանի կողմից վկայագրեր հանձնվեցին ծրագրի դասընթացավարներ՝ կարիերային ուղղորդման կենտրոնի պատասխանատու Կ. Ղարագյոզյանին և դասախոս Ժ. Բարսեղյանին: Վերջիններս խրախուսվեցին «SHUTTLE» դասընթացների ընթացքում ցուցաբերած բարձր կատարողականի, աջակցության և նվիրվածության համար:
- **2023 թվականի մարտի 30-ին** «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում եվ սպասարկում» երկրորդ կուրսի ուսանողների համար անցկացվեց «Անձի ինքնագնահատում և SWOT (ՈՒԹՀՌ) վերլուծություն» խորագրով սեմինար-դասընթաց, որի նպատակն էր ձևավորել անձի ինքնահաստատման էության, նշանակության, գործոնների, ձևերի, բաղադրիչների վերաբերյալ գիտական գիտելիքների հաղորդումն ու ինքնագնահատման գործնական կարողություններ:

Դասընթացի թեմաներն էին.

- Ինքնագնահատում
- Ինքնագնահատման վրա ազդող գործոնները
- Ինքնագնահատման ձևերը
- Ինքնագնահատման հարցաշար
- ՈՒԹՀՌ (SWOT) վերլուծություն

- **2023 թվականի մարտի 31-ին** «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում» մասնագիտությամբ երրորդ կուրսի մոտ անցկացվեց սեմինար «Ինչպես գրել ինքնակենսագրական»: Կարիերայի պատասխանատուն բաժանեց թերթիկներ և ուսանողները գրեցին CV-ներ :

- **2023 թվականի ապրիլի 10-ից 19-ը** տեղեկատվական հանդիպումներ անցկացվեց Գյումրու թիվ 24,4,29,30,15,40,19,11,41,38 հիմնական դպրոցներում: Հանդիպումների նպատակն էր մանկավարժական հանրույթին և 9-րդ դասարանի աշակերտներին տրամադրել տեղեկատվություն՝
  - ✓ մասնագիտական կողմնորոշման գործիքակազմի և դրանց արդյունավետ կիրառման, ինչպես նաև ուսումնարանի գործունեության և հաջողությունների վերաբերյալ
  - ✓ ծանոթացնել «Ուսանողական/աշակերտական ընկերություն»-ների փորձարարական ծրագրին, որը գործում է «Բիզնես և Կրթություն Գործընկերություն» հիմնադրամի համագործակցությամբ՝ «Մասնագիտական կրթություն և ուսուցում համագործակցություն

Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում ծանոթացնել ուսումնարանում գործող մասնագիտություններին.

1. Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի
2. Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար
3. Խոհարարական գործ՝ խոհարար
4. Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում՝ ռադիոմեխանիկ (ռադիոհեռուստատեսային սարքավորումների նորոգման և սպասարկման)
5. Ոսկերչություն՝ ոսկերիչ
6. Կահույքի արտադրության տեխնոլոգիա՝ կահույքագործ

Շրջայցին մասնակցեցին թիվ 11 հիմնական դպրոցի աշակերտներտ և «Նոր լույս» Մենթորինգ կենտրոնի սաները:

- **2023 թվականի ապրիլի 5-ին** կազմակերպվել է «Գործատուին ներկայանալու հմտություններ» խորագրով սեմինար-դասընթաց: Դասընթացին մասնակցում էր «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար» առաջին կուրսի ուսանողները, ընդհանուր նպատակն է՝ գործատուին ներկայանալու հմտությունների՝ արդյունավետ աշխատանքային հարցազրույցին մասնակցելու, մրցունակ ինքնակենսագրական, մոտիվացիոն նամակ գրելու կարողությունների ձևավորում:
- **2023 թվականի ապրիլի 16-ին** Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսանողները մենթոր Ռ.Պետրոսյանի և կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատու Կ. Ղարագյոզյանի գլխավորությամբ մասնակցեցին «Կոռուպցիա. Shift+Delete» ծրագրի շրջանակներում իրականացրած բանավեճերի մրցաշարին: Թեման բավականին հետաքրքիր էր և ուսուցողական. «Կոռուպցիան կրթական հաստատությունում հնարավոր չէ արմատախիլ անել»: Ուսումնարանի գիտակ և տրամաբանող սովորողները լավագույնս հանդես գալով «ԴԵՄ» թիմում՝ հաղթանակեցին և վաստակելով 52,5 միավոր՝ հնարավորություն ստացան անցնել 2-րդ փուլ:
- **2023 թվականի ապրիլի 18-ին** «Ոսկերչություն՝ ոսկերիչ» երկրորդ և «Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողների համար «Հուզական ինտելեկտ» թեմայով սեմինար վարեցին «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի անդամներ՝ Սոնա Հակոբյանը և Արտաշես Հարությունյանը:
- **2023 թվականի ապիլի 26-ին** «Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» առաջին կուրսի ուսանողների համար անցկացվեց «Շարունակական/հարատև կրթություն և կարիերայի զարգացման հմտություններ» թեմայով դասընթաց:

Ուսանողը կիմանա՝

- ✓ շարունակական կրթության մեթոդաբանությունը
- ✓ շարունակական կրթության սկզբունքները, բաղադրիչները

Կկարողանա պլանավորել իր կարիերայի ուղին շարունակական կրթության հիման վրա:

Կտիրապետի սեփական կարիերայում հաջողություններն ու անհաջողությունները իրատեսորեն ու ադեկվատ գնահատելու կարողությունները:

- **2023 թվականի մայիսի 2-ին** «Խոհարարական գործ» մասնագիտության ուսանողները մասնակցեցին ՛՛Միասին՛՛ հիմնադրամի կողմից/Miassine/ կազմակերպված, «Ուհի» ցուցահանդեսի շրջանակներում «Աշկերտների տան»-ը անցկացված, վարպետաց դասին:

Նորարարական հրուշակագործության հմուտ վարպետ, նկարչուհի Սաթենիկ Գևորգյանի կողմից անցկացված հմտությունների ցուցադրությունը ծառայեց իր նպատակին: Մեր ուսանողներն իրենց խոհարարական կարողությունները լավագույնս դրսևորելով՝ անմիջական մասնակցություն ունեցան թխվածքաբլիթների թխման գործընթացին: 3D թխվածքաբլիթներ պատրաստող կրեատիվ մասնագետի հետ սովորողները կատարեցին անուշեղենի ձևավորման ինքնատիպ աշխատանքներ:

- **2023 թվականի մայիսի 5-ին** անցկացվել է «Ի՞նչ է կարիերայի կենտրոնը (նպատակ, գործառույթներ)» թեմաներով դասընթացի հերթական հանդիպումը: Սեմինարը անցկացվեց «Ոսկերչություն՝ ոսկերիչ» մասնագիտությամբ երկրորդ կուրսի մոտ:

Դասընթացի ընդհանուր նպատակն էր՝

Կարիերայի տեղեկատվության, խորհրդատվության, ուղղորդման աշխատանքների, ինչպես նաև կարիերայի պլանավորմաքն կարողությունների ձևավորման միջոցով նպաստել աշխատաշուկայում ուսանողների շրջանավարտների մրցունակության բարձրացմանը, աջակցել իրենց մասնագիտությամբ զբաղվածության հնարավորությունների բացահայտմանը:

- **2023 թվականի մայիսի 11-ին** «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» մասնագիտության առաջին կուրսի ուսանողները կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատու Կ. Ղարագյոզյանի նախաձեռնությամբ այցելեցին «Լյուքս» վարսավիրանոց: Վարպետ-մասնագետների կողմից ներկայացվեց տասնամյակների պատմություն ունեցող Գյումրվա ամենահին վարսավիրանոցի ստեղծման, փորձաշատ վարսավիրների աշխատանքային գործունեության մասին հետաքրքիր փաստեր և հիշարժան դիպվածներ: Այցելեցությունը ծառայեց իր նպատակին

- **2023 թվականի մայիսի 17-ին** կազմակերպվել է «Աշխատանքի որոնման նորագույն մեթոդներ » խորագրով սեմինար-դասընթաց, որին մասնակցեցին «Ոսկերչություն՝ ոսկերիչ» առաջին կուրսի ուսանողները:

- **2023 թվականի մայիսի 22-ին և 23-ին** Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից իրականացվող «Մասնավոր հատվածի զարգացում և ՄԿՈՒ» ծրագրի շրջանակում, «Կարիերայի Լաբ»(@careerlab.arm) ՀԿ-ի համագործակցությամբ, իրականացվեց մասնագիտական կողմնորոշման դասընթաց Շիրակի մարզի դպրոցների 37 աշակերտների համար:

- ✓ Դասընթացի նպատակն էր նպաստել դպրոցների աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը՝ սեփական հետաքրքրություններին ու պահանջմունքներին համապատասխան:

Դպրոցականները հնարավորություն ունեցան ուսումնական հաստատությունում տեսականորեն և գործնականում ծանոթանալ տարբեր մասնագիտությունների առանձնահատկություններին:

Ծրագրի երկրորդ օրը կազմակերպվեց ուսումնաճանաչողական այց «Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամ և «Royal Furniture Gyumri» կահույքագործության արտադրամաս, որտեղ աշակերտները հանգամանորեն ուսումնասիրեցին «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» և «Կահույքի արտադրության տեխնոլոգիա՝ կահույքագործ» մասնագիտություններին բնորոշ գործնական աշխատանքների կազմակերպման և իրականացման գործընթացները: Դպրոցականները ձեռք բերեցին նաև գործատուների կողմից առաջարկվող ոլորտային կրթական և աշխատանքային պահանջարկի ու հնարավորությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն:

Կատարող՝ կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատու Կ. Ղարագյոզյան